


ՀՈՄԵՐՈՍ «ՈՂԻՍԱԿԱՆ»



Հոմերոսի մասին կենսագրական տեղեկություններ մեզ չեն հասել:

Հասկանալի է, սակայն, որ «Իլիականը» և «Ոդիսականը» ստեղծվել են ավելի ուշ, քան նրանցում նկարագրված իրադարձությունները, Հոմերոսի ծննդավայրը նույնպես անհայտ է: Հոմերոսը վախճանվել է Կիկլադյան կղզեխմբի Իոս կղզում: «Իլիականն» ու «Ոդիսականը» ամենայն հավանականությամբ ստեղծվել են հարակից կղզիներից մեկում կամ Հունաստանի փոքրասիական ափին, որը բնակեղցած է իոնյան ցեղերի կողմից: Բայց և այնպես ճշգրիտ տեղեկություններ չկան նաև Հոմերոսի ցեղային պատկանելիության մասին ևս:

Ավանդաբար Հոմերոսը նկարագրվում է որպես կույր մարդ: «Հոմերոս» բառը հունարեն նշանակում է «չի տեսնում», որից ենթադրվել է, որ նա կույր է եղել: Քանի որ շատ հայտնի մարգարեններն ու երգիչները կույր են եղել՝ ըստ հին տրամաբանության, որը կապում է մարգարեական և բանաստեղծական շնորհքի հետ:

Բացի «Իլիականից» և «Ոդիսականից»՝ Հոմերոսն ունի նաև այլ ստեղծոգործություններ, որոնցից են՝ «Հոմերական օրհներգերը» (Ք.ա. VII-V դդ.), «Մարգարետ» երգիծական պոեմը և այլն:

«Իլիական» և «Ոդիսական»

«Իլիական» և «Ոդիսական» մեծածավալ պոեմների հեղինակը համարվում է հույն բանաստեղծ Հոմերոսը: Բազմադարյա բանավոր զարգացման երկար ճանապարհի անցնելով՝ «Իլիականը» ժողովրդական ասացողներից գրի է առնվել Ք.ա. VI դարում Հունաստանի տիրակալ Պիսիստրատոսի թագավորության օրոք, այնուհետև դարերի ընթացքում խմբագրվել է և բաժանվել 24 երգերի՝ հունական գրերի քանակին համապատասխան:

Ըստ վերնագրի՝ «Իլիականը» պետք է լիներ պոեմ Իլիոնի (Տրոյայի) մասին: Սակայն իրականում պոեմի բովանդակությունը շատ ավելի նեղ է, քան նրա անվանումն է. այնտեղ նկարագրվում է հունա-տրոյական պատերազմի միայն մի դրվագը:

Տրոյացիներն արդեն տասներորդ տարին է դիմակայում են արայական (հունական) զորքերի պաշարմանը, որոնք բանակել են քաղաքի և ծովի միջև գտնվող հարթավայրում, ափ դուրս քաշված նավերի դիմաց: Երկու պոեմներում էլ ռեա-

լիստական վառ գույներով են վերարտադրվում իրական կյանքի երևույթները և հունական ցեղերի կենցաղը, «Իլիականում» գերազանցապես ռազմական ժամանակաշրջանի կյանքն է արտացոլված, իսկ «Ռդիսականում»՝ գլխավորապես խաղաղ կյանքի տեսարաններ են:

Պատերազմը «Իլիականի» հերոսների տարերքն է. ընդ որում՝ հաճախ մարտը ներկայացվում է ոչ թե որպես ժողովրդական զանգվածների ընդհարում, այլ հանդես են գալիս բացառիկ ուժով, խիզախությամբ և հմտությամբ աչքի ընկնող առանձին հերոսներ, որոնք հեշտությամբ հասարակ զինվորների մի ողջ բազմության կարող են կոտորել, իսկ բուն մարտը այդ հերոսների միջև է տեղի ունենում: Մարտնչողներն սկզբում միմյանց վրա են նետում նիզակները, ապա՝ քարեր, իսկ հետո ձեռնամարտի են անցնում: Այդպիսի մենամարտերից հատկապես կարևոր է Աքիլլեսի և Հեկտորի մենամարտը:

«Իլիականում» հաճախ նկարագրվում են առանձին հերոսների սխրագործությունները. օրինակ՝ 5-րդ երգում՝ Դիոմեդեսինը, 11-ում՝ Ագամեմնոսինը, 16-ում՝ Մենելավոսինը, երբ նա Պատրոկլեսի դին է պաշտպանում տրոյացիներից: Սակայն ամենահրաշալի սխրանքը Աքիլլեսի հաղթանակն է Հեկտորի նկատմամբ (XXII):

Մենամարտից առաջ, սովորաբար, հերոսների միջև երկխոսություն է տեղի ունենում՝ ուժեղը պարծենում է թույլի առջև, բացի այդ՝ մարտիկն ուզում է իմանալ, թե ում հետ գործ ունի: Հեկտորի մենամարտը տևում է մինչև մուրթն ընկնելը, և նա սպանվում է Աքիլլեսի ձեռքով:

Ո՞Վ Է ՀՈՄԵՐՈՍԸ

Հոմերոսի անձը խորհրդավոր է. նրա մասին ժամանակակիցների տեղեկություններ չկան: Ենթադրվում է, որ նա ապրել է Տրոյական պատերազմի օրոք (Ք.ծ.ա. 1184 թ., չհաստատված), կամ այն ժամանակ, երբ Հերակլեսի սերունդները՝ առասպելական Հերակլիդները, վերաբնակվել են Պելոպոննեսոսում (ինչպես կարծում էին հույները՝ Տրոյական պատերազմից 80 տարի անց): Ք.ծ.ա. V-IV դարերում գրված նրա կենսագրությունը վերագրվել է պատմահայր Հերոդոտոսին:

Արիստոտելը Հոմերոսին, բացի «Իլիական»-ից ու «Ռդիսական»-ից, վերագրել է նաև մեզ չհասած զավեշտա-հերոսական մի պոեմ՝ «Մարգիտես» («Պոետիկա», 1448b-1449a) վերնագրով: Իսկ Թեագենես Հոեգիացին (Ք.ծ.ա. VI դար) կարծում էր, որ Հոմերոսի երկերն այլաբանական, այլ ոչ թե պատմական նշանակություն ունեն:

Ք.ծ.ա. VI դարից ի վեր, տարբեր իշխանավորների (Սոլոնին, Պիսիստրատոսին կամ Հիպպարքոսին) վերագրված հրահանգներով՝ Հոմերոսի պոեմներն ամբողջովին արտասանվել են Աթենքում՝ Աթենա դիցուհուն նվիրված Համաթենականք տոնակատարության ժամանակ:

Հնարավոր է՝ Հոմերոսը մոտավորապես ունեցել է այն արտաքինը, որով նա մեզ է ներկայանում պահպանված բազմաթիվ կիսանդրիներով:

Պահպանվել է Հոմերոսի պոեմների ավելի քան 1000 ձեռագիր՝ շատ ավելին, քան որևէ այլ անտիկ հեղինակի գործերի: Մոտ 300-ն ընդօրինակվել են IX-XIV դարերում: Կա 52 թերթ «Իլիական»-ի մի բացառիկ ձեռագրից՝ Ilias Ambrosiana

(թերթերը պահվում են Միլանի Bibliotheca Ambrosiana-ում), ընդօրինակված V դարի վերջին կամ VI դարի սկզբին, Ալեքսանդրիայում կամ Կոստանդնուպոլսում: Ձեռագիրը շքեղորեն նկարազարդ է եղել. թերթերի մեծ մասի երեսի կողմը մանրանկար է, իսկ բնագիրը՝ հակառակ կողմում:

1488 թ. «Իլիական»-ն ու «Ոդիսական»-ն առաջին անգամ միասին հրատարակվել են Ֆլորենցիայում, և դրանով առհասարակ սկիզբ է դրվել հին հունական գրականության տպագրությանը:

ՀՈՄԵՐՈՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼԵՋՈՒՆ

Հոմերոսը հիմնովին չի փոխել բանահյուսությունից հայտնի առանցքային իրադարձությունները. տրոյացիները չպետք է հաղթեին պատերազմում, Աքիլլեսը չպետք է փրկվեր կամ Տրոյան գրավեր, իսկ Ոդիսևսը՝ սպանվեր: Հայտնի պատմության գլխավոր դեպքերն ինչպես ոգեշնչել են Հոմերոսին, այնպես էլ նրա առաջ որոշակի սահմաններ դրել հեղինակային միջամտության համար: Այդուհանդերձ, նա լավագույնս է օգտվել ստեղծագործական ազատությունից, ընդգծել կամ զարգացրել է զանազան դրվագներ, հայտնի դեպքերի միջև ընտրություն արել, դրանք պատմել յուրովի, հորինել կամ բաց թողել ինչ-ինչ մանրամասներ, կերպարներն օժտել այս կամ այն հատկանիշներով և ամեն բան ներկայացրել իր անկրկնելի լեզվով ու ոճով: Պոեմի ողջ գործողությունը նա կառուցել է Ագամեմնոնի հանդեպ Աքիլլեսի քենի հիման վրա:

Տարբեր ժամանակաշրջաններ իրենց կնիքն են թողել նաև Հոմերոսի լեզվի վրա: Այն հունարենի տարբեր ժամանակային շերտերի ու բարբառների խառնուրդ է՝ հոնիական ու էոլական: Այդ խառնուրդում քերականական նույն վերջավորության երկու, անգամ երեք ժամանակային ու բարբառային տարբերակ կիրառվել են որպես բացարձակ հոմանիշներ՝ առանց անգամ ոճական զանազանության: Իսկ արդեն Հոմերոսից հետո՝ V դարում աթենական տոնակատարությանը պարտադիր արտասանության նյութ դառնալուց հետո, այդ լեզուն իր մեջ նաև ատտիկյան բառեր ու քերականական ձևեր է ներառել: Արդյունքում ստացվել է այսպես կոչված «էպիկական/հոմերոսյան բարբառ», որով ոչ ոք երբեք չի խոսել: Դա արհեստական լեզու էր՝ առօրեականից բարձր ու փոքր-ինչ խորհրդավոր ոճ, որն այնուամենայնիվ հիմնականում հասկանալի էր բոլոր հույներին:

«Իլիական»-ում արտացոլված են ոչ միայն բրոնզեդարյան իրողություններ, ասենք՝ ճոխ պալատներ կամ զենքերի որոշակի տեսակներ (ինչը հաստատվել է հնագիտությամբ), այլև հետագա դարերի և արդեն Հոմերոսին ժամանակակից ինչ-ինչ տարրեր (երգասացները հնացած, անհասկանալի դարձած բառերն ու հասկացությունները փոխարինում էին նորերով, որ ունկնդիրն իրենց հասկանա): Բերենք մի ցայտուն օրինակ. ճիշտ է, զենքերն «Իլիական»-ում հիմնականում պղնձից են և հաճախ պարզապես «պղինձ» են կոչվում, ինչը բնական է բրոնզի դարի համար, սակայն հիշատակվում է նաև երկաթը, որը սովորական էր դարձել արդեն Հոմերոսի ժամանակ:

ՀՈՍԵՐՈՍ

«ՈՂԻՍԱԿԱՆ»

(հատված պոեմից՝ կրճատումներով)

Էվրիկլիան ուրախ սրտով թռավ դեպի հարկը վերին՝
Իր տիրուհուն ավետելու վերադարձը Ողիսևսի:
Նրա ծնկներն ուժեղացել, ոտքերն առաջ էին մղվում.
Եվ հասնելով սնարի մոտ՝ այսպես դիմեց նա քնքշագին.
«Զարթիր, որդյա՛կ իմ սիրելի, որպեսզի քո աչքով տեսնես
Այն ամենը, որի մասին երագել ես մինչև հիմա:
Ողիսևսը արդեն վաղուց գըտնվում է իր պալատում.
Նա կոտորեց ամբարտավան սեղեխներին, որոնք անվերջ
Չարչարեցին նրա որդուն և ինչքերը շռայլեցին»
Այնժամ այսպես պատասխանեց Պենելոպեն առաքինի.
«Ինչո՞ւ ես ինձ խաբում այսպես, երբ սիրտս լի է դառնությամբ,
Եվ քո անմիտ այդ խոսքերով ինձ արթնացնում անուշ քնից,
Որ հազիվ էր իջել հիմա իմ հոգնատանջ թարթիչներին:
Այս, դեռ երբեք այսքան անուշ չէի քնել այն օրվանից,
Որ նա մեկնեց դեպի Իլիոն՝ այդ անիծյալ երկիրը սև:
Ուստի գնա՛, թող ինձ հանգիստ և ցա՛ծ իջիր վերնատնից,
Քո փոխարեն թե մի ուրիշ ստրկուհի եկած լիներ
Եվ այդպիսի համբավներով խանգարեր իմ քունը քաղցրիկ,
Նրան իսկույն դաժանաբար դուրս կանեի ապարանքից»:
Նրան նորից պատասխանեց Էվրիկլիան հավատարիմ.
«Չեմ խաբում քեզ, ո՛վ իմ որդյակ, Ողիսևսն է եկել իրոք,
Եվ պալատումն է նա արդեն, օտարական մարդու տեսքով,
Նա հենց ինքն էր, որին անվերջ անպատվեցին ապարանքում,
Իսկ այդ մասին Տելեմաքը իմացել էր արդեն վաղուց,
Սակայն ոչինչ չէր հայտնել նա իր սիրելի հոր պատվերով,
Որ հաջողվեր նրան պատժել գոռոզներին այդ անօրեն»:
Այդպես ասաց: Պենելոպեն ցած թռչելով մահճակալից,
Արտասվելով ուրախացած, փաթաթվեց իր սըտնտուին.
Եվ, դիմելով նրան, այսպես խոսեց այնժամ նա ցնձագին.
Մո՛տ եկ, մայրի՛կ իմ սիրելի, ճշմարիտը պատմիր դու ինձ,
Ապա ինչպե՞ս սեղեխներին կարողացավ հաղթահարել
Նա մեն-մենակ, երբ որ նրանք հավաքվում են միշտ խմբերով»:
Այսպես նրան պատասխանեց Էվրիկլիան հավատարիմ.
«Ո՛չ, տեսել եմ, ո՛չ իմացել, այլ դիտապաստ ընկնողների

Ոռնոցն եմ ես լսել միայն: Մենք, սրահի խորքում կանգնած,
Կուչ եկել ու դողում էինք ամուր փակած դռան հետև,
Մինչև որ ինձ Տելեմաքը կրկին ձայնեց ապարանքից:
Նրան իր հայրն էր պատվիրել, որ գա և ինձ պալատ կանչի:
Ողիսեսին տեսա այնտեղ, կանգնել էր նա՝ անշունչ ընկած
Դիակների կույտի միջում: Քո սիրտն անշուշտ կխռովվեր,
Թե որ նրան դու տեսնեիր կորած արյան ճապաղիքում:
Նա ուղարկեց ինձ վերնատուն, որ իմաց տամ իմ տիրուհուն:
Ուստի իջիր, որ ձեր սրտերն ուրախանան հանդիպումից,
Եվ մոռանաք կյանքում կրած տանջանքները ձեր բազմաթիվ.
Չէ՞ որ հիմա ձեր փափագը կատարվում է վերջ ի վերջո»:
Այսպես նրան պատասխանեց Պենելոպեն առաքինի.
«Քնքո՞ւշ տատիկ, քո սիրտն ազնիվ թող այնքան էլ չուրախանա.
Թե իսկապես վերադառնար և հայտնվեր նա պալատում,
Մենք բոլորս կհրձվեինք, մանավանդ ես և մեր որդին,
Սակայն ցնորք են իսկապես պատմածները քո այդ բոլոր:
Աստվածներից մեկն է անշուշտ կոտորել այդ սեղեխներին,
Զայրանալով նրանց անխիղճ ու անօրեն արարքներից»:
Նորից այսպես պատասխանեց էվրիկլիան հավատարիմ.
«Ո՛վ իմ որդյակ, այդ ի՞նչ խոսք էր, որ դուրս թռավ քո շրթերից,
Երբ որ արդեն ամուսինդ գըտնվում է ապարանքում,
Դու կրկնում ես, թե չի գալու, անհավատ է քո սիրտը միշտ:
Դու շտապիր, կյանքիս գնով ես պատրաստ եմ գրագ գալու,
Թե քեզ խաբեմ, ինձ հատուցիր՝ դաժանորեն ըսպանելով»:
Այդպես նրան պատասխանեց Պենելոպեն առաքինի.
«Բարի՛ տատիկ, մարդիկ թեկուզ իմաստուն
Դարձյալ նրանց չի հաջողվում անմահների կամքն իմանալ:
Արի՛ գնանք իմ որդու մոտ, աչքով տեսնենք սպանվածներին
Եվ իմանանք, թե այդ ո՞վ է կոտորել այն գոռոզներին»:
Այդ ասելով՝ նա իջնում էր վերնատնից բուրումնավետ
Ու երկմտում ինքըն իր մեջ, ամուսնու հետ խոսի հեռվից,
Թե գրկելով ջերմ համբուրի նրա գլուխն ու ձեռները:
Երբ անցնելով նա սալարկած շեմքը դռան՝ մտավ պալատ,
Նստեց դեմը Ողիսեսի, բոցավառվող կրակի մոտ:
Ողիսեսը բազմախորհուրդ նստել էր անդ բարձր սյան մոտ,
Աչքն անընդհատ գետնին հառած, սպասելով,
Թե երբ արդյոք, ճանաչելով, իր սիրելի կինը պետք էր ձայն տա իրեն:
Պենելոպեն նայում էր լուռ, և զարմանք էր պատել հոգին:
Մերթ հայացքն իր հառում էր նա բազմաչարչար Ողիսեսին,
Սակայն նրան չէր ճանաչում մուրացիկի այդ հագուստով:

Տելեմաքն էլ, զայրանալով, այսպես դիմեց իր մորն այնժամ.
«Ո՛վ անխիղճ մայր, կրծքիդ ներքո սիրտդ կարծես քարից լինի,
Ինչպես ես դու իմ հայրիկից հեռու կանգնել օտարի պես,
Եվ նրա մոտ չես էլ նստում, չես հարցնում վիշտը նրա:
Եվ ոչ մի կին այսքան երկար չէր համբերի հեռու կանգնել
Իր ամուսնուց, որ ծովերում այսքան երկար տառապելով,
Քսաներորդ տարին նորից վերադարձել է հայրենիք:

Բայց քո սիրտը, ո՛վ անխիղճ մայր,

Միշտ էլ քարից կարծր է եղել»:

Որովհետև իրար միջև մենք նշաններ ունենք ծածուկ,
Որ պահել ենք միշտ էլ գաղտնի, և ուրիշներն այդ չգիտեն:
...Ես վստահ եմ, որ ինձ շուտով կձանաչի:

Քանի կորած եմ կեղտի մեջ և հին քրջեր ունեմ հագիս,
Պահել է, նա ինձ չի ձանաչի և կարող է արհամարհել»:

...Եվ քաջարի Ոդիսևսին տնտեսուհի էվրինոմեն

Լողացրեց ապարանքում, օծեց յուղով բուրումնավետ,

Այնուհետև տվեց նրան ասեղնագործ մի պատմուձան,

Իսկ Աթենաս աստվածուհին օծեց նրան լույսի շողով,

Որ ավելի բարձրահասակ և ավելի գեր երևա,

Իսկ մազերը գանգուր-գանգուր թափվում էին նրա գլխից:

Եվ ինչպես որ արհեստավորն է արծաթը ոսկեգօծում,

Որ արհեստն իր սովորել է Հեփեստոսից և Պալլասից,

Եվ միշտ շնորհք է հաղորդում իր գործերին,

Ճիշտ այդպես էլ Աթենասը շնորհք թափեց Ոդիսևսի ուս ու գլխին:

Երբ դուրս եկավ նա բաղնիքից, նմանվում էր անմահներին,

Եվ ետ գալով՝ նստեց նորից բարձրիկ գահին շքեղազարդ,

Իր սիրելի կնոջ դիմաց, և այսպիսի խոսքով դիմեց.

«Մ՛յ դու անխիղճ, Օլիմպոսյան աստվածները ամենագոր

Կանանցից քեզ են պարգևել դաժանագույն սիրտն աշխարհում,

Եվ ո՛չ մի կին այսքան երկար չէր համբերի հեռու կանգնել

Իր ամուսնուց, որ ծովերում այսքան երկար տառապելով՝

Քսաներորդ տարին նորից վերադարձել է հայրենիք»:

Այնժամ այսպես պատասխանեց Պենելոպեն առաքինի.

«Անխիղճ, ես ո՛չ մեծամիտ եմ, ո՛չ էլ հպարտ, ամբարտավան,

Ո՛չ էլ իմ միտքն է մոռացկոտ, այլ շատ լավ եմ հիշում ես քեզ,

Երբ հեռացար Իթակեից դու նավերով երկարաթի:

...Արցունքներով ուրախության նա մոտեցավ իր ամուսնուն.

Եվ սպիտակ իր թևերով նրա վզին փաթաթվելով,

Նրա գլուխը համբուրեց և այսպիսի խոսքով դիմեց.

«Ո՛վ Ոդիսևս, մի՛ գայրանար, դու, որ ամեն ինչ աշխարհում

Բոլորից լավ ես հասկանում, աստվածները նախանձելով,
Մեզ դառնություն վիճակեցին, բաժանեցին մեզ իրարից
Ու չթողին, որ մենք կյանքի գարունն իրար հետ վայելենք:
Ճիշտ այդպես էլ Պենելոպեն, հանդիպելով Ոդիսևսին,
Չէր ցանկանում իր թևերը պոկել նրա պարանոցից:
Եվ վարդամատն Արշալույսը կհանդիպեր նրանց լացին,
Թե որ Պալլաս աստվածուհին մի այլ հնարք չմտածեր.
Նա Գիշերին հեռու պահեց, կաշկանդելով երկրի ծայրում,
Արշալույսին էլ արգելեց Օվկիանոսից վեր բարձրանալ,
Եվ չթողեց, որ նա լծի նժույգներն իր արագընթաց,
Որոնք լույս են բերում բոլոր մարդկանց:
Իսկ քաջարի Ոդիսևսը այսպես դիմեց իր կողակցին.
«Սիրելի՛ կին, դեռևս իմ տառապանքը վերջ չի գտել,
Եվ անհաշիվ տանջանքներ են ինձ սպասում հետագայում:
Այժմ գնանք, ճվ սիրելիս, և մոտենանք մահճակալին
Ու, պառկելով մեր անկողնում, անուշիկ քունը վայելենք»:
Այսպես նրան պատասխանեց Պենելոպեն առաքինի.
«Քո ցանկացած ժամին իսկույն անկողինդ կպատրաստեմ,
Քանի որ քեզ անմահները վերադարձի արժանացրին,
Եվ դու քո տանն ես գտնվում, հայրենիքում քո կարոտած»:
Դառնություն վիճակեցին, բաժանեցին մեզ իրարից
Ու չթողին, որ մենք կյանքի գարունն իրար հետ վայելենք: